

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2021

Ֆ Ի Չ Ի Կ Ա

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

1 Ի՞նչն են անվանում մեխանիկական շարժում:

- 1) Ժամանակի ընթացքում մարմնի վիճակի ամեն մի փոփոխությունը:
- 2) Մարմնի դիրքի փոփոխությունն այլ մարմինների կամ նրա մասերի դիրքերի փոփոխությունը միմյանց նկատմամբ:
- 3) Այլ մարմինների ազդեցությամբ տեղի ունեցող շարժումը:
- 4) Կամայական շարժում:

2 Որքա՞ն է ուղղագիծ հավասարաչափ շարժվող հեծանվորդի արագության v_x պրոյեկցիան, եթե նրա կորորհնատը t ժամանակամիջոցում փոխվեց x_0 -ից մինչև x :

- 1) $\frac{x - x_0}{t}$:
- 2) $\frac{x_0 - x}{t}$:
- 3) $\frac{x + x_0}{t}$:
- 4) $\frac{\sqrt{x_0^2 + x^2}}{t}$:

3 Ինչպե՞ս կփոխվի ազատ անկման արագացումը, եթե մարմնին հաղորդվի սկզբնական արագություն:

- 1) Կմեծանա:
- 2) Կփոքրանա:
- 3) Նույնը կմնա:
- 4) Կախված է սկզբնական արագության ուղղությունից:

4 Շրջադարձ կատարելիս ավտոմեքենան շարժվում է մոդուլով հաստատուն v արագությամբ: Որքա՞ն է նրա կենտրոնաձիգ արագացումը, եթե հետագծի կորության շառավիղը R է:

- 1) $v^2 R$:
- 2) $\frac{v^2}{R}$:
- 3) vR :
- 4) $\frac{v}{R}$:

5 Ինչպե՞ս է իրեն պահում մարմինը հաշվարկման իներցիալ համակարգում, եթե նրա վրա այլ մարմիններ չեն ազդում կամ դրանց ազդեցությունները համակշռված են:

- 1) Միշտ շարժվում է ուղղագիծ և հավասարաչափ:
- 2) Միշտ գտնվում է դադարի վիճակում:
- 3) Կամ դադարի վիճակում է, կամ շարժվում է ուղղագիծ հավասարաչափ:
- 4) Շարժվելով՝ ի վերջո կանգ է առնում:

6 Ինչի՞ց է կախված զապանակի կոշտությունը:


- 1) Դեֆորմացիայի չափից:
- 2) Առաձգականության ուժից:
- 3) Չապանակի չափերից, ձևից և նյութի տեսակից:
- 4) Բոլոր պատասխանները սխալ են:

7 Որքա՞ն է a արագացումով շարժվող վերելակում կանգնած m զանգվածով մարդու P կշիռը, եթե վերելակի արագացման վեկտորն ուղղված է ուղղաձիգ դեպի վեր:

- 1) $P = mg$:
- 2) $P = m(g - a)$:
- 3) $P = m(g + a)$:
- 4) $P = m(a - g)$:


8 Երկու՝ \vec{F}_1 և \vec{F}_2 ուժեր, կիրառված են նույն կետում և փոխադրահայաց են: Որքա՞ն է այդ ուժերի համագործի մոդուլը:

- 1) $F_1 + F_2$:
- 2) $\sqrt{F_1^2 + F_2^2}$:
- 3) $F_1 - F_2$:
- 4) $F_1^2 + F_2^2$:



9 Անկշիռ լծակի ծայրերին ազդում են \vec{F}_1 և \vec{F}_2 ուժերը, որոնց բազուկները d_1 և d_2 են: Ի՞նչ պայմանի դեպքում լծակը կլինի հավասարակշռության վիճակում:

- 1) $\frac{F_1}{F_2} = \frac{d_1}{d_2}$:
- 2) $\frac{F_1}{d_2} = \frac{d_1}{F_2}$:
- 3) $\frac{F_2}{F_1} = \frac{d_1}{d_2}$:
- 4) Միշտ կլինի հավասարակշռության վիճակում:



10 Ինչպիսի՞ն է ուղղաձիգ թելից կախված գնդիկի հավասարակշռությունը:

- 1) Կայուն:
- 2) Անկայուն:
- 3) Անտարբեր:
- 4) Պատասխանը կախված է թելի երկարությունից:

11

Ե՞րբ է կատարվում մեխանիկական աշխատանք:

- 1) Բոլոր այն դեպքերում, երբ մարմնի վրա ուժ է ազդում:
- 2) Բոլոր այն դեպքերում, երբ մարմինը շարժվում է:
- 3) Միայն այն դեպքում, երբ մարմնի վրա ազդող ուժը ուղղահայաց չէ տեղափոխությանը:
- 4) Միայն այն դեպքում, երբ մարմնի վրա ազդող ուժն ուղղահայաց է տեղափոխությանը:

12

Ի՞նչ մեծություններից է կախված մարմնի կինետիկ էներգիան:

- 1) Երկրի մակերևույթից ունեցած բարձրությունից:
- 2) Միայն մարմնի զանգվածից:
- 3) Միայն մարմնի արագությունից:
- 4) Մարմնի զանգվածից և արագությունից:

13

Պոտենցիալ էներգիա՞ն, թե՞ պոտենցիալ էներգիայի փոփոխությունն է կախված գրոյական մակարդակի ընտրությունից:

- 1) Պոտենցիալ էներգիան:
- 2) Պոտենցիալ էներգիայի փոփոխությունը:
- 3) Երկուսն էլ:
- 4) Ոչ մեկը:

14

Ո՞րն է իմպուլսի չափման միավորը ՄՀ-ում:

- 1) 1 Ն ս վ^{-1} :
- 2) 1 կգ ս վ :
- 3) 1 կգ ս վ^{-1} :
- 4) $1 \text{ Ն ս}^{-1} \text{ վ}$:

15

Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Համակարգի իմպուլսը փոփոխելու համար անհրաժեշտ է, որ...

- 1) համակարգը լինի փակ:
- 2) համակարգում գործեն ներքին ուժեր:
- 3) համակարգի վրա ազդեն արտաքին ուժեր:
- 4) համակարգի վրա չազդեն արտաքին ուժեր:

16

Նշված ո՞ր մեծություններից կախված չէ հեղուկի սյան գործադրած ճնշումն անոթի հատակին:

- 1) Հեղուկի խտությունից:
- 2) Հեղուկի սյան բարձրությունից:
- 3) Այն անոթի ձևից, որում լցված է հեղուկը:
- 4) Տվյալ աշխարհագրական վայրում ազատ անկման արագացման արժեքից:

17

Մարմինը լողում է հեղուկի մակերևույթին: Ո՞րն է մարմնի վրա ազդող ծանրության և արքիմեդյան ուժերի մոդուլների ճիշտ հարաբերակցությունը:

- 1) $|m\vec{g}| = |\vec{F}_u|$:
- 2) $|m\vec{g}| > |\vec{F}_u|$:
- 3) $|m\vec{g}| < |\vec{F}_u|$:
- 4) $|m\vec{g}| + |\vec{F}_u| = 0$:

18

Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Այն ամենափոքր ժամանակը, որից հետո տատանումները կրկնվում են, կոչվում է...

- 1) տատանումների հաճախություն:
- 2) տատանումների պարբերություն:
- 3) տատանումների լայնույթ:
- 4) տատանումների փուլ:

19

Ինչպե՞ս կփոխվի մաթեմատիկական ճոճանակի ներդաշնակ տատանումների հաճախությունը, եթե տատանումների լայնույթը մեծացնենք 9 անգամ:

- 1) Կենդանա 9 անգամ:
- 2) Կենդանա 3 անգամ:
- 3) Կփոքրանա 3 անգամ:
- 4) Կմնա նույնը:

20





Ո՞ր պնդումն է մոլեկուլային-կինետիկ տեսության հիմնադրույթ:

- 1) Գազերն ընդունում են այն անոթի ծավալը, որի մեջ լցված են:
- 2) Հեղուկները ընդունում են այն անոթի ձևը, որի մեջ լցված են:
- 3) Պինդ մարմինները պահպանում են իրենց ձևը և ծավալը:
- 4) Նյութի ատոմները և մոլեկուլները անընդհատ, քառսային (ջերմային) շարժման մեջ են:

21

Ո՞ր գրաֆիկն է նկարագրում իզոթերմ պրոցես:

- 1) ա:
- 2) բ:
- 3) գ:
- 4) դ:



22

Ինչպե՞ս է փոխվում հաստատուն զանգվածով իդեալական գազի խտությունը իզոխոր տաքացման դեպքում:

- 1) Մեծանում է:
- 2) Փոքրանում է:
- 3) Չի փոխվում:
- 4) Իդեալական գազի խտությունը զրո է:

23

Ո՞րն է միատոմ իդեալական գազի U ներքին էներգիայի ճիշտ բանաձևը՝ կախված գազի m զանգվածից, M մոլային զանգվածից, T բացարձակ ջերմաստիճանից:

- 1) $U = mRT$:
- 2) $U = \frac{m}{M} RT$:
- 3) $U = \frac{2}{3} \frac{m}{M} RT$:
- 4) $U = \frac{3}{2} \frac{m}{M} RT$:

24

Ի՞նչ միավորով է չափվում նյութի տեսակարար ջերմունակությունը միավորների ՄՀ-ում:

- 1) 1 Ջ:
- 2) 1 Ջ/(կգԿ):
- 3) 1 Ջ/կգ:
- 4) 1 Ջ/Կ:

25

Ո՞րն է իդեալական ջերմային մեքենայի ՕԳԳ-ն՝ արտահայտած ջեռուցչի T_1 և սառնարանի T_2 ջերմաստիճաններով:

- 1) $\eta = \frac{T_2}{T_1}$:
- 2) $\eta = 1 - \frac{T_2}{T_1}$:
- 3) $\eta = \frac{T_1}{T_2}$:
- 4) $\eta = \frac{T_2}{T_1} - 1$:

26


Թվարկված ո՞ր մասնիկներն ունեն դրական լիցք:

- 1) Էլեկտրոնը:
- 2) Նեյտրոնը:
- 3) Պրոտոնը:
- 4) Էլեկտրոնը և պրոտոնը:

27

Ո՞ր գրաֆիկն է պատկերում կետային լիցքի էլեկտրաստատիկ դաշտի լարվածության մոդուլի կախումը լիցքի ունեցած հեռավորությունից:

- 1) ա:
- 2) բ:
- 3) գ:
- 4) դ:



28

Ո՞ր մեծությունից է կախված կոնդենսատորի էլեկտրաունակությունը:

- 1) Լիցքից:
- 2) Լարումից:
- 3) Տեսակարար դիմադրությունից:
- 4) Չափերից և ձևից:

29


Ո՞րն է նախադասության սխալ շարունակությունը:
Հաղորդչի ծայրերին լարման բացակայության դեպքում`

- 1) հաղորդչում առկա ազատ էլեկտրոնները կատարում են անկանոն, քառային շարժում:
- 2) հաղորդչի լայնական հատույթով անցած գումարային լիցքը զրո է:
- 3) հաղորդչում լիցքի մակրոսկոպական տեղափոխություն չի կատարվում:
- 4) հաղորդչում առկա ազատ լիցքակիրները կատարում են ուղղագիծ հավասարաչափ շարժում:

30

Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը: Միացնող հաղորդալարերի դիմադրությունն անտեսել:

- 1) $3R$:
- 2) $\frac{3R}{2}$:
- 3) $\frac{R}{3} R$:
- 4) 0 :



31

Ինչպե՞ս է փոխվում մետաղի տեսակարար դիմադրությունը ջերմաստիճանը բարձրացնելիս:

- 1) Մեծանում է:
- 2) Փոքրանում է:
- 3) Չի փոխվում:
- 4) Պատասխանը կախված է ազատ էլեկտրոնների կոնցենտրացիայից:

32


Ո՞ր միջավայրերում է դրսևորվում հոսանքի մագնիսական ազդեցությունը:

- 1) Միայն վակուումում:
- 2) Միայն մետաղներում:
- 3) Մետաղներում և էլեկտրոլիտներում:
- 4) Կամայական միջավայրում:

33

Մի դեպքում հաստատուն մագնիսը մետաղե օղակի մեջ մտցնում են հյուսիսային բևեռով, մյուս դեպքում՝ հարավային բևեռով: Ո՞ր դեպքում օղակում կմակաձվի հոսանք:

- 1) ա դեպքում:
- 2) բ դեպքում:
- 3) Ոչ մի դեպքում:
- 4) Երկու դեպքում էլ:



34

Ի՞նչ էներգիայով է օժտված տատանողական կոնտուրն այն պահին, երբ կոնդենսատորի լիցքն առավելագույնն է:

- 1) Միայն էլեկտրական դաշտի էներգիայով:
- 2) Միայն մագնիսական դաշտի էներգիայով:
- 3) Էլեկտրական և մագնիսական դաշտերի էներգիաներով:
- 4) Էներգիայով օժտված չէ:

35

Ինչպիսի՞նք է առարկայի պատկերը հարթ հայելում:

- 1) Ուղիղ, իրական, նույն չափի:
- 2) Ուղիղ, կեղծ, նույն չափի:
- 3) Ուղիղ, կեղծ, փոքրացված:
- 4) Շրջված, իրական, մեծացված:

36

Հավաքող ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ պետք է տեղադրել առարկան, որպեսզի նրա պատկերը լինի իրական:

- 1) Կիզակետային հեռավորությունից մեծ հեռավորությամբ:
- 2) Կիզակետային հեռավորությունից փոքր հեռավորությամբ:
- 3) Կամայական հեռավորությունում պատկերը կլինի իրական:
- 4) Կամայական հեռավորությունում պատկերը կլինի կեղծ:

37

Ո՞ր երևույթն է բացատրվում լույսի ինտերֆերենցով:

- 1) Սպիտակ լույսի տարալուծումը հատվածակողմով անցնելիս:
- 2) Բարակ թաղանթների գունավորումը:
- 3) Լուսային ճառագայթների շեղումը երկրաչափական ստվերի տիրույթ:
- 4) Լուսավոր կետի հայտնվելը փոքրիկ, անթափանց սկավառակի ստվերի կենտրոնում:

38

Մեկուսացված էլեկտրաչեզոք ցինկե քիթեղը լուսավորում են անդրմանուշակագույն ճառագայթումով: Ի՞նչ նշանի լիցք է ձեռք բերում քիթեղը:

- 1) Գրական:
- 2) Բացասական:
- 3) Չի լիցքավորվում:
- 4) Կամայական նշանի լիցք:

39

Ի՞նչ ν հաճախության ֆոտոն է ճառագայթում ատոմը, երբ այն E_2 էներգիայով գրգռված վիճակից անցնում է E_1 էներգիայով հիմնական վիճակի:

- 1) $\frac{E_2}{h}$:
- 2) $\frac{E_1}{h}$:
- 3) $\frac{E_2 + E_1}{h}$:
- 4) $\frac{E_2 - E_1}{h}$:

40

Մենդելեևի պարբերական աղյուսակում քիմիական տարրի կարգաթիվը n° ր մեծությանն է հավասար:

- 1) Միջուկում նուկլոնների թվին:
- 2) Միջուկում նեյտրոնների թվին:
- 3) Միջուկում պրոտոնների թվին:
- 4) Միջուկում պրոտոնների և նեյտրոնների թվին:

41

Տրամվայը շարժվում է 36 կմ/ժ հաստատուն արագությամբ: Որքա՞ն ժամանակում այն կանցնի 500 մ ճանապարհ:

42

Անոթում կա 0,45 կգ ջուր: Որքա՞ն է ջրի նյութի քանակը, եթե նրա մոլային զանգվածը $18 \cdot 10^{-3}$ կգ/մոլ է:

43

Միևնույն չափի երկու մետաղե գնդիկներ ունեն 12 մԱլ և 16 մԱլ լիցքեր: Որքա՞ն կլինի գնդիկներից յուրաքանչյուրի լիցքը, եթե նրանք հայենք իրար և նորից հեռացնենք: Պատասխանը բազմապատկեք 10^9 -ով:

44

Ուրանի ${}_{92}^{234}\text{U}$ իզոտոպի միջուկը ենթարկվում է α -տրոհման: Որքա՞ն կլինի առաջացած միջուկի զանգվածային թիվը:

(45-46) Դադարի վիճակից շարժումն սկսելուց 20 վ անց ավտոմեքենայի արագությունը դարձավ 40 մ/վ: Շարժումը համարել հավասարաչափ արագացող:

45 Ի՞նչ արագացմամբ էր շարժվում ավտոմեքենան:

46 Որքա՞ն է արագացում հաղորդող հաստատուն ուժը, եթե ավտոմեքենայի զանգվածը $3 \cdot 10^3$ կգ է:

(47-48) 580 գ զանգվածով օդն իզոբար տաքացնում են 20 Կ-ով՝ նրան հաղորդելով 5810 Ջ ջերմաքանակ: Օդի մոլային զանգվածը 0,029 կգ/մոլ է, իսկ գազային ունիվերսալ հաստատունը 8,3 Ջ/մոլ·Կ:

47 Որքա՞ն աշխատանք է կատարել օդն իզոբար ընդարձակվելիս:

48 Որքանո՞վ է փոխվել օդի ներքին էներգիան:

**(49-50) $3 \cdot 10^3$ Օմ դիմադրությամբ հարթ շրջանակը տեղադրված է մագնիսական դաշտում:
Շրջանակ թափանցող մագնիսական հոսքը 10^{-3} վ-ի ընթացքում հավասարաչափ
նվազում է 6 Վբ-ով:**

49 Որքա՞ն է շրջանակում մակաձված էլՇՈւ-ն:

50 Որքա՞ն է շրջանակով անցնող հոսանքի մեծությունը:

**(51-52) 0,3 մ կիգակետային հեռավորություն ունեցող հավաքող բարակ ուսպնյակից 0,15 մ
հեռավորությամբ տեղադրված է առարկան:**

51 Ուսպնյակից ի՞նչ հեռավորությամբ կստացվի առարկայի պատկերը: Պատասխանը
բազմապատկեք 10-ով:

52

Որքա՞ն է այդ դեպքում ոսպնյակի խոշորացումը:

(53-54) Տվյալ մետաղի համար ֆոտոէֆեկտի կարմիր սահմանը $6 \cdot 10^{14}$ Հց է: Պլանկի հաստատունը $6,6 \cdot 10^{-34}$ Ջ·վ է, էլեկտրոնի լիցքի մոդուլը՝ $1,6 \cdot 10^{-19}$ Կլ:

53

Որքա՞ն է ֆոտոէլեկտրոնների առավելագույն կինետիկ էներգիան, եթե նրանց լրիվ արգելակման լարումը 3,3 Վ է: Պատասխանը բազմապատկեք 10^{21} -ով:

54

Որքա՞ն է մետաղի վրա ընկնող լույսի հաճախությունը, եթե ֆոտոէլեկտրոնների լրիվ արգելակման լարումը 3,3 Վ է: Պատասխանը բազմապատկեք 10^{-14} -ով:

(55-57) Մարմինը կատարում է $x = x_0 \cos(\omega t + \varphi_0)$ բանաձևով նկարագրվող տատանումներ, որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Ժամանակի սկզբնական պահին մարմնի շեղումը հավասարակշռության դիրքից 0,1 մ է, արագության պրոյեկցիան՝ -1 մ/վ: Մարմնի զանգվածը 1 կգ է, իսկ լրիվ մեխանիկական էներգիան՝ 1 Ջ:

55 Որքա՞ն է տատանումների սկզբնական փուլն արտահայտված աստիճաններով:

56 Որքա՞ն է տատանումների շրջանային հաճախությունը:

57 Որքա՞ն է տատանումների լայնույթը: Ընդունել՝ $\sqrt{2} = 1,4$: Պատասխանը բազմապատկել 10^2 -ով:

(58-60) 45 Վ ԷլՇՈւ և 1,5 Օմ ներքին դիմադրություն ունեցող հոսանքի աղբյուրի սեղմակներին միացված է 10,5 մ երկարությամբ և 0,2 մ² կտրվածքի մակերեսով նիկելինե հաղորդալար: Նիկելինի տեսակարար դիմադրությունը $0,4 \cdot 10^{-6}$ Օմ·մ է:

58 Որքա՞ն է հաղորդալարի դիմադրությունը:

59 Որքա՞ն է հոսանքի ուժը հաղորդալարում:

60 Որքա՞ն է լարումը հոսանքի աղբյուրի սեղմակներում:

(61-64) 0,2 կգ զանգվածով և 1 լ ծավալով գնդիկը թելով ամրացված է բավականաչափ մեծ խորություն ունեցող լճի հատակին: Թելը կտրում են: Թելը կտրելուց որոշ ժամանակ անց գնդիկի շարժումը դառնում է հավասարաչափ: Համարել, որ գնդիկի վրա ազդող ջրի դիմադրության ուժն ուղիղ համեմատական է նրա արագության քառակուսուն՝ $F_r = kv^2$, որտեղ $k=0,02$ կգ/մ-ը հաստատուն մեծություն է: Ջրի խտությունը 10^3 կգ/մ³ է:

61 Որքա՞ն է գնդիկի վրա ազդող արքիմեդյան ուժը:

62 Որքա՞ն է գնդիկի արագացումը թելը կտրելուց անմիջապես հետո:

63 Որքա՞ն է գնդիկի վրա ազդող համագոր ուժը, ջրի մակերևույթին հասնելիս:

64 Որքա՞ն է գնդիկի հավասարաչափ շարժման արագությունը:

(65-68) 5 դպտր և 2,5 դպտր օպտիկական ուժեր ունեցող բարակ նսպնյակները տեղադրված են իրարից 0,9 մ հեռավորությամբ: AB առարկայի հեռավորությունը առաջին նսպնյակից 30 սմ է:

65 Առաջին նսպնյակից ի՞նչ հեռավորության վրա կստացվի AB առարկայի A_1B_1 պատկերն այդ նսպնյակում: Պատասխանը բազմապատկեք 10-ով:

66 Որքա՞ն կլինի առաջին նսպնյակի խոշորացումը:

67

Երկրորդ ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ կստացվի A₁B₁-ի պատկերը երկրորդ ոսպնյակում: Պատասխանը բազմապատկեք 10-ով:

68

Որքա՞ն կլինի ոսպնյակների համակարգի խոշորացումը:

69

v_0 արագությամբ շարժվող m զանգվածով գունդը քախվում է նույն զանգվածով անշարժ գնդին: Բախումը կենտրոնական է և բացարձակ առաձգական: Հաստատեք կամ ժխտեք հետևյալ պնդումները:

1. Բախման արդյունքում համակարգի իմպուլսը փոքրանում է:
2. Բախման արդյունքում համակարգի ընդհանուր մեխանիկական էներգիան չի փոխվում:
3. Բախումից հետո համակարգի կինետիկ էներգիան $mv_0^2 / 2$ է:
4. Բախումից հետո գնդերը շարժվում են միևնույն ուղղությամբ:
5. Բախումից հետո երկրորդ գունդը սկսում է շարժվել v_0 արագությամբ:
6. Բախումից հետո երկրորդ գունդը սկսում է շարժվել առաջին գնդի շարժման սկզբնական ուղղությամբ:

70

I հոսանքի ուժով հաղորդչի Δl երկարությամբ ուղիղ տեղամասը գտնվում է B ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում: Հաստատեք կամ ժխտեք հետևյալ պնդումները:

1. Մագնիսական դաշտն այդ տեղամասի վրա կազդի միայն նրա շարժման դեպքում:
2. Ամպերի ուժի մոդուլը՝ $F_{\text{Ա}} = IB \Delta l \sin \alpha$:
3. Ամպերի ուժի ուղղությունը որոշվում է աջ ձեռքի կանոնով:
4. Մագնիսական դաշտում գտնվող հոսանքակիր հաղորդչի տեղամասի վրա ազդող ուժը կլինի առավելագույնը, երբ այն լինի ինդուկցիայի գծերին զուգահեռ:
5. Մագնիսական դաշտում գտնվող հոսանքակիր հաղորդչի վրա ազդող Ամպերի ուժի մոդուլը կախված չէ հոսանքի ուղղությունից:
6. Մագնիսական դաշտում հոսանքակիր հաղորդչի շարժման ընթացքում Ամպերի ուժի աշխատանքը միշտ զրո է: